

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՅ ԵԿՈՂ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՀԱԶՈՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԿԻՃԱԿՈՒՄ ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՌԱԶԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Մայիսի 30-31-ին Հայաստանի նախագահի կարգավիճակով երկօրյա պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Հայաստանի բարձրաստիճան հյուրը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլու, ինչպես նաև Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան միջազգային օդանավակայանում Հայաստանի նախագահին դիմավորեցին Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեան Դավիթաշվիլին, Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիան, պաշտոնատար այլ անձինք:

ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՕՐԲԵԼԻԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆՏԱՎԱՅՐՈՒՄ

Մայիսի 30-ին Վրաստանի նախագահի նստավայրում «Օրբելիանի» պալատում կայացավ պաշտոնական այցով Վրաստան ժամանած Հայաստանի նախագահի Վահագն Խաչատուրյանի դիմավորման պաշտոնական արարողությունը:

Ձինվորական նվագախմբի կատարմամբ հնչեցին Հայաստանի եւ Վրաստանի պետական օրհներգերը: Հայաստանի ու Վրաստանի նախագահները պատվո պահակախմբի հրամանատարի ուղեկցությամբ կատարեցին զինվորական նվագախմբի եւ պատվո պահակախմբի ստուգայց:

Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, կայացավ Վրաստանի ու Հայաստանի նախագահներ Սալոմե Ջուրաբիշվիլու եւ Վահագն Խաչատուրյան

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



ՊՏՏԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԴԵՏԸ ՄԱՍՆԱԿՅԵՅ ՀՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՓԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

300 ՏԱՐԻ ԱՆՑ ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՉԱԿ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Մայիսի 30-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին մասնակցեց Հորդանան գետի մոտ՝ Փրկչի մկրտության վայրին կից հողատարածքը Վրաստանին հանձնելու պաշտոնական արարողությանը: Տարածքում նախատեսվում է կառուցել վրացական մշակութային կենտրոն:

- Այսօր պատմական օր է, քանի որ պաշտոնապես ստացանք այն հողատարածքը, որտեղ կառուցվելու է Վրաստանի մշակութային կենտրոնը:

Սա երեւի երազանք է բոլոր վրացիների համար, քանի որ վրացիները 300 տարի անց վերադառնում են Սուրբ Երկիր:

Կիր, - նշեց վարչապետը: Իրակլի Դարիբաշվիլու նախաձեռնությամբ բացվեց հուշաքար՝ իր եւ Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի ստորագրություններով: Վարչապետը նաև շնորհակալություն հայտնեց Հորդանանին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐՂԱՏՈՆ - 108



300 ՏԱՐԻ ԱՆՅ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԿՐԿԻՆ ԽՈՍԵՅ ԵՐԵՔ ԼԵՉՎՈՎ ՈՒ ԿՐԿԻՆ ԽԱՂԱՎՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ ԿՈՉԵՅ

Արդեն 108 տարի Թբիլիսիսն չի դադարում տոնել իր նկարագրին թե՛րեւս ամենաբնորոշ, ամենաբարի, համախմբող ու հավերժորեն արդիական՝ Սայաթ-Նովյան Վարդատունը: Հովհաննես Թումանյանի, Իոսեփ Գրիշաշվիլու, Գեորգ Բաշինջադյանի, Դավիթ Իմեդաշվիլու, Տիգրան Տաթևի ճանաչմանը, 1914 թվականի մայիսի 15-ին առաջին անգամ նշված Վարդատունը, հաջորդող տարիների ընթացքում մի քանի անգամ խափանվել է: Եվ սակայն Կովկասին, մեր ամբողջ աշխարհին այդքան անհրաժեշտ խաղաղության ու սիրո սայաթնովյան ուղերձը, թբիլիսցիներին պարտավորել է նորից խոսել Սայաթ-Նովյանի լեզվով, նորից անրացնել 300 տարվա վաղեմության սիրո կամուրջները:

Համավարակով պայմանավորված երկամյա դադարը կրկին խախտվեց: Ու առավել կարողություն Սայաթ-Նովյան նորից Թբիլիսիսի ամենակենտրոն Մեյդան կոչվող հիմնավոր թաղամաս, Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկե-

ղեցու գավիթ ու Գորգասալու հրապարակ բերեց վրաստանցու, հայաստանցու, այլերկացու ու կրկին խաղաղություն, կրկին բարեկամություն ու սեր սերմանեց:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՆԵՎԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱԶԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 104-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 28-ին Հայաստանը նշեց Առաջին Հանրապետության հիմնադրման եւ Սարդարապատի հերոսամարտում տարած պատմական հաղթանակի 104-ամյակը՝ Հանրապետության օրը:

1918-ի մայիսի 28-ին Ղարաքիլիսայում, Բաշ-Ապարանում, Սարդարապատում տված կենսացնահու ճակատամարտերում տարած հաղթանակով վերականգնվեց հայ ժողովրդի անկախությունը, որը շուրջ 9 դար առաջ կորսված էր:



1918 թվականի մայիսի 28-ին Թիֆլիսում, Անդրկովկասյան ժողովրդավարական Դաշնային Հանրապետության փլուզումից հետո, «Հայկական ազգային խորհրդի» կողմից հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը, որն ընդամենը երկու տարվա կյանք ունեցավ մինչև 1920 թվականի դեկտեմբերի 2-ը: Անկախ Հայաստանի առաջին վարչապետը Հովհաննես Բաջաճունցին էր, վերջինը՝ Սիմոն Վրացյանը:

Մայիսի 28-ին Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը Սարդարապատի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց Սարդարա-

պատի ճակատամարտի հերոսների հիշատակին:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Վահագն Խաչատուրյանը եւ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը ծաղկեպսակ դրեցին Սարդարապատի հուշահամալիրի մոտ:

Այնուհետև, հուշահամալիրի մոտ ծաղիկներ խոնարհեցին կառավարության անդամները, պատգամավորները եւ Հայաստանում հավատարամագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները:

ՏԱՐԵՂԱՐԶ

ԵՐԿԻՐԸ ՆՇԵՑ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ»

Մայիսի 31-ին Վրաստանում նշվեց «Ոստիկանության օրը»: Տոնական միջոցառումն անցկացվեց Թբիլիսիում, ներքին գործերի նախարարության վարչական շինության մերձակայքում: Միջոցառմանը ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին:



Միջոցառմանը, որին ներկա էին նաեւ Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմնի անդամները, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներն ու ներքին գործերի նախարարության աշխատակիցները, բացեց ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց ոստիկանության բարձր, արհեստավարժ գործունեության համար նշելով, որ կառավարությունն իրականացնում է հնարավորը իրավապահ մարմինների աշխատա-

կիցների համար աշխատանքային եւ կենցաղային նորմալ պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Վարչապետը հայտարարեց, որ կառավարությունը ծրագրել է Թբիլիսիում ոստիկանության աշխատակիցների համար կառուցել հազար բնակարանանոց ավան: Տոնական հանդիսության ավարտին, Վրաստանի նախագահը պետական պարգևներ հանձնեց իրենց ծառայական պարտքը բարեխղճորեն կատարած իրավապահներին:

ՊՍՏԱՎԱՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՅԵՅ ՀՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԻ ԱՓԻՆ ՎՐԱՍԱՆԻՆ ՀՈՐԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նանի արքայազնին հողը Վրաստանին տրամադրելու համար:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Զորդանանի Յաշիմյան Թագավորության թագավոր Աբդալլահ Երկրորդի հետ:

Զորդանանից Իրակլի Դարիբաշվիլին այցով մեկնեց Իսրայել, որտեղ հանդիպումներ ունեցավ Իսրայելի վարչապետ Նաֆթալի Բենեթի, արտաքին գործերի նախարար եւ այլընտրանքային վարչապետ Յաիր Լապիդի



Իսրայելի վարչապետ Նաֆթալի Բենեթի (կենտրոնում) հանդիպում է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլիին (աջից) և այլ Վրաստանի պաշտոնյաների հետ:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐՉԱՊԵՏ ԴՎԹՅԱՆԸ՝ ՎՐԱՍԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ, սույն թվականի հունիսի 1-ից Վրաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը նշանակվել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ:

Նշենք, որ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը 2019 թվականի հունիսից զբաղեցնում էր Վիրահայոց թեմի առաջնորդի տեղապահի պաշտոնը:

Հոգեշնորհի Հայր Սուրբ, «Վրաստան» թերթի խմբագրությունն իր եւ թերթի հազարավոր ընթերցողների անունից շնորհավորում է Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ նշանակվելու առիթով եւ մաղթում երկար տարիների կյանք, վիրահայ հոտն առաջնորդելու ուժ ու կարողություն:



ՌՈՒՄ - ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍԱՆԸ ՌԻԿՐԱԻՆԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՐԵԼ Է 7 ՄԻԼԻՈՆ ԴՈՒԱՐ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼ 28 ՀԱՁԱՐ ՌԻԿՐԱԻՆԱՅԻ



Երկրի խորհրդարանում տարեկան զեկույցը ներկայացնելիս՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանն արդեն 7 մլն դոլար է հատկացրել Ուկրաինային, եւ երկիրը շարունակում է օգնություն տրամադրել պատերազմից տուժած եւ ներկայումս Վրաստանում բնակվող 28 հազար ուկրաինացու:

Ուկրաինայի հետ համերաշխությունն արտահայտվում է ոչ միայն երկկողմ ձեռնարկով գործնական աջակցությամբ, այլ նաեւ Վրաստանի ամուր դիրքորոշմամբ, բանաձեւերի հովանավորությամբ/համահովանավորությամբ եւ միջազգային բոլոր հարթակներում հռչակագրերին միանալու միջոցով: Փետրվարից ի վեր միջազգային կազմակերպությունների շրջանակներում Վրաստանի կողմից Ուկրաինային աջակցող հայտարարությունների, բանաձեւերի եւ որոշումների ընդհանուր թիվը հասել է 260-ի:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԶԵԼԵՆՍԿԻ. «ՌԻԿՐԱԻՆԱՅԻ ՏԱՐԱԾՔԻ 20 ՏՈԿՈՍԸ ՕԿՈՒՊԱՑՎԱԾ Է»



Օկուպանտները փորձում են պատերազմի գոնե 100-րդ օրը հասնել այն նպատակներին, որոնց վրա հույս ունենին փետրվարի 24-ից հետո առաջին օրերին,- ասեց օրույա տեսաուղերձում ասել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին:

Նրա խոսքով, Ռուսաստանը ներկայումս օկուպացրել է Ուկրաինայի տարածքի 20 տոկոսը:

- Ռուսական բանակը ներխուժել է Ուկրաինայի 3 620 բնակավայր: Դրանցից մեզ հաջողվել է ազատագրել 1017-ը, 2603-ը դեռ պետք է ազատագրենք: Այսօրվա դրությամբ, օկուպանտները վերահսկում են մեր տարածքի 20 տոկոսը՝ գրեթե 125 հազար քառակուսի կիլոմետր: Սա շատ ավելի է, քան Բենդերի երկրներն ամբողջությամբ, ասաց Վլադիմիր Զելենսկին եւ հավելեց, որ Ուկրաինան օրական կորցնում է 60-100 զինվոր, վիրավորվում է մինչեւ 500-ը:

Լայնածավալ ներխուժումից հետո 100 օրվա ընթացքում զավթիչների կողմից վիրավորվել է 689 երեխա,

որից 243-ը՝ զոհվել է,- ասաց Վլադիմիր Զելենսկին եւ հավելեց, որ պատերազմի սկզբից ի վեր մինչեւ 12 միլիոն մարդ ստիպված է եղել լքել իր տունը, իսկ ավելի քան հինգ միլիոնը՝ երկիրը:

ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՌԻԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏ ԿՆՔԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ինչպես հայտարարեց ՌԴ Դաշնային խորհրդի ներկայացուցիչ Վալենտինա Մատվինկոն, Ռուսաստանը պատրաստ է խաղաղության պայմանագիր կնքել Կիևի հետ: Նրա խոսքով, Ռուսաստանը բաց է բանակցությունների համար:

- Մեզ անհրաժեշտ են դիվանագիտական, խաղաղ լուծումներ, բայց դա պահանջում է երկու երկրների կամքը: Մենք պատրաստ ենք բանակցությունների, համաձայնագրի ստորագրմանը, որը կավարտի Ուկրաինայում քաղաքացիական պատերազմը եւ մեզ կբերի խաղաղություն, բայց Կիևի կողմից մնան արձագանք չենք տեսնում,- ասաց Վալենտինա Մատվինկոն:

Նշենք, որ Ռուսաստան-Ուկրաինա բանակցությունների հարթակ են դարձել Բելառուսն ու Թուրքիան, սակայն բանակցություններն առայժմ գործնականում դադարեցված են:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՒԲԱԽԻԶԵ. «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ՍՅՆՆԱՐԸ ԶԻ ԻՐԱԿԱՆԱՅՎԻ»

Վրաստանի կառավարող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, մեկնաբանելով Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակի ստացման հարցում ընդդիմության դիրքորոշումը, հայտարարեց, որ նրանք հակահետեզրագիտում քարոզչություն են վարում ոչ միայն երկրի ներսում, այլ նաեւ նրա սահմաններից դուրս:



- Նրանց հաշվարկը ավելի քան պարզ է. հունիսի վերջին Վրաստանը, ի տարբերություն Ուկրաինայի եւ Մոլդովայի, չպետք է ստանա Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակ, ինչը նրանց ծրագրի համաձայն, կհանգեցնի հասարակական ընդվզումների, Ազգային շարժման եւ նրա խամաճիկ կուսակցությունների կողմից իշխանության հեղաշրջմանն ու պատերազմում Վրաստանի ներգրավմանը,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն եւ հավելեց, որ Վրաստանը «Վրացական երազանքի» իշխանության օրոք հասավ Եվրամիության հետ ինտեգրմանն ուղղությամբ նշանակալից առաջընթացի:

- Հենց «Վրացական երազանքի» իշխանության պայմաններում ստորագրվեցին Ասոցացման պայմանագիրն ու Ազատ առևտրի համաձայնագիրը, ստացանք անայցեզրային պայմանակարգ,- նշեց Իրակլի Կոբախիձեն եւ հավելեց, որ Վրաստանը բոլոր պարամետրերով գերազանցում է մյուս երկու թեկնածու երկրներին:

- Վրաստանն արդեն կատարել է Ասոցացման համաձայնագրով նախատեսված պարտավորությունների 45 տոկոսը, ինչը աննախադեպ արդյունք է: Այդ ցուցանիշով Վրաստանը գերազանցում է ոչ միայն Ուկրաինային ու Մոլդովային, այլև արդեն իսկ Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակ ունեցող մի շարք երկրների,- ընդգծեց Կոբախիձեն:

Կառավարող թիմի ղեկավարը հիշեցրեց, որ Վրաստանին շնորհելով անդամակցության թեկնածուի կարգավիճակ՝ Եվրամիությունն ավելորդ ոչ մի եվրո չի ծախսում, քանի որ կարգավիճակի շնորհմամբ, Եվրամիությունը լրացուցիչ ֆինանսավորման ոչ մի պարտավորություն չի ստանձնում: Իրակլի Կոբախիձեի հայտարարությամբ, Եվրամիությունը թեկնածուի կարգավիճակ հանձնելով, չի ստանձնում նաեւ ժամկետների հարցում որևէ պարտավորություն: Որպես օրինակ, Իրակլի Կոբախիձեն նշեց, որ Թուրքիային անդամակցության կարգավիճակ շնորհվել է 23, Հյուսիսային Մակեդոնիային՝ 17, Մոնտենեգրոյին՝ 12, Սերբիային՝ 10, իսկ Ալբանիային՝ 8 տարի առաջ, եւ այդ երկրների լիարժեք անդամակցության հարցը դեռևս չի քննարկվել:

Նման պայմաններում, երբ «թեկնածուի կարգավիճակի հանձնման համար Եվրամիությունը ոչ ֆինանսական եւ ոչ էլ ժամկետների պարտավորություն չի ստանձնում, անհասկանալի է, թե ինչու պետք է մերժի Վրաստանին եւ վրաց ժողովրդին այդ կարգավիճակի հանձնելու հարցում, երբ երկիրն ու իշխանությունն անդամակցության համար նախատեսված բոլոր պարտավորությունները բարեխղճորեն կատարում են,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Անդրադառնալով Ռուսաստանի դեմ պատժամիջոցների թեմային՝ «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն նշեց, որ Վրաստանը Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ չի կիրառում, իսկ ինչ վերաբերում է պատժամիջոցները շրջանցելուն, ապա Վրաստանի դիրքորոշումը հստակ է՝ Վրաստանը չի օգտագործվի այդ նպատակով:

Իրակլի Կոբախիձեի խոսքով, Ռուսաստանի դեմ պատժամիջոցները շրջանցելու վերաբերյալ ոչ մի ապացույց չկա, սակայն ընդդիմությունը շարունակում է հարցը կասկածի տակ դնել:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԻՐԱՎԼԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻՆ՝ ԳԼՈԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ GLOBSEC ՖՈՐՈՒՄՈՒՄ

Հունիսի 2-4-ը Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում անցկացվեց Գլոբալ անվտանգության ֆորում (GLOBSEC), որին մասնակցեցին 67 երկրների պատվիրակների, այդ թվում՝ տասը նախագահների եւ վարչապետների, ինչպես նաեւ տարբեր երկրների արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարներ:



Միջոցառումը բացեց GLOBSEC-ի նախագահ Ռոբերտ Վասը: Բացման արարողության բարձրաստիճան հյուրերին դիմեցին Սլովակիայի Հանրապետության նախագահ Զուզանա Չապուտովան, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին եւ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենը: 17-րդ GLOBSEC ֆորումում քննարկեցին աշխարհում անվտանգության եւ ճկունության անրապնդման ու-

ղիները, արդյունավետ քայլեր ձեռնարկել Ուկրաինային աջակցելու եւ Եվրոպական հարելանության անրապնդման համար, ինչպես նաեւ մոբիլիզացնել արեւմտյան ռեսուրսները՝ անրապնդելու երկրների ճկունությունը: Բրատիսլավայում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին պատվիրակության անդամների հետ մաս-

նակցեց Գլոբալ անվտանգության ֆորումի (GLOBSEC) գալա-ընթրիքին եւ մրցանակաբաշխությանը: Ավանդական մրցանակաբաշխության ժամանակ Ուկրաինացի ժողովրդին հանձնվել է Զեխիայի եւ Սլովակիայի Տրանսատլանտյան մրցանակը:



ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵՎ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻԻ ԵՎԱՍՈՒՏ՝ ԶՈՐՍ ԱՍՏՈՒՄ

Վրաստանի Ազգային բանկի տվյալներով, տարեսկզբից ի վեր արտասահմանյան բանկային քարտերից ծախսվել է 1,1 մլրդ լարի: Այս ցուցանիշը երեք անգամ ավելին է, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Վրաստանի բանկոմատների եւ տերմինալների միջոցով արտասահմանյան քարտերով անսակաճ շուրջ 1,6 մլն լարիի գործարք է իրականացվում:

ԳԱԶԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ ԿՀԱՆԳԵՑՆԻ ՀԱՅԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ

Վրաստանի էներգաբաշխման ընկերության տեղեկատվությամբ, ընթացիկ տարվա հուլիսի 1-ից ոչ կենցաղային սպառողների եւ բիզնեսի համար Թբիլիսիում 1 խորանարդ մետր գազը կթանկանա 25, իսկ մարզերում՝ 23 թեթրիով:

Մեկնաբանելով որոշումը՝ Վրաստանի հացթուխների ասոցիացիայի ղեկավար Մալխազ Դոլիձենի ասաց, որ զանգվածային արտադրության հացի գնի անհապաղ թանկացում չի սպասվում:

- Վրացական հացը, որը թխվում է բաց այրման ռեժիմով, այս պահին կթանկանա, ինչ վերաբերում է զանգվածային սպառման հացին, այսպես կոչված քարե հացի մեքենաները ներարկման ծուլման մեքենաներ են, որոնք չեն պահանջում այդ քանակությամբ գազ: Ուստի, գազի սակագրի համաչափ թանկացում չի սպասվում,- ասաց Դոլիձեն:

ՄԱՀԱՑԵԼ Է ԹԲԻԼԻՍԻԻ ՓՈՒՔԱՂՈՔԱՊԵՏ ԻԼԻԱ ԷԼՈՇՎԻԼԻՆ

Հունիսի 1-ին իր բնակարանում մահացած է հայտնաբերվել Թբիլիսիի փոխքաղաքապետ 47-ամյա Իլիա Էլոշվիլին: Նա 2017 թվականից զբաղեցնում էր Թբիլիսիի փոխքաղաքապետի պաշտոնը: Նշենք, որ 2012-2016 թվականներին Իլիա Էլոշվիլին եղել է Վրաստանի էներգետիկայի փոխնախարարը, իսկ 2017 թվականին՝ Վրաստանի էներգետիկայի նախարարը: Մինչ այդ, նա ղեկավար պաշտոններ է զբաղեցրել մասնավոր հատվածում, ինչպես նաեւ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի եւ ԱՄՆ USAID ծրագրերում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՆԱՊԱՅՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ 100-ԻՑ ՀԱՍՑՎՈՒՄ Է 150 ԼԱՐԻԻ

Հունիսի 1-ին, երկրի կառավարության միատուն վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ սոցիալապես անապահով երեխաների սոցիալական օգնության նպաստը 100 լարիից հասցվում է 150 լարիի:

Վարչապետի խոսքով, իշխանության գլխավոր խնդիրը երեխաների բարեկեցիկ ապագայի մասին հոգալն է, նրանց զարգացման, առողջության եւ դաստիարակության համար պայմանների ստեղծումն է, որի ուղղությամբ իրականացվել են մի շարք բարեփոխումներ ու նախագծեր: - Անցյալ տարի կրկնապատկել ենք սոցիալապես անապահ-

ով երեխաներին տրվող օգնությունը: Հունիսի 1-ից օգնությունն առավել կաճի՝ կազմելով 150 լարի: Ծրագիրը կվերաբերի ավելի քան 215 հազար երեխայի, պետությունը կհատկացնի 341 մլն լարի: Երեխաների աղքատությունը նվազեցնելու եւ նրանց զարգացումն ապահովելու մեր ջանքերը կշարունակվեն եւ կամրապնդվեն,- ասաց վարչապետը:

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԻՉ ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի գրասենյակը, բաժանող գծի շրջակա գյուղերում ապրող, հակամարտությունից տուժած կանանց եւ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց համար, համագործակցելով Ֆինանսների նախարարության ակադեմիայի հետ, հայտարարել է մրցույթ՝ «Արտադրողականության պրակտիկ կուրս - Ինչպես սկսենք բիզնես» խորագրով:

Ինչպես նշեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Թեա Ախվլեդիանին, դասընթացն ուղղված է ձեռներեցության մասին տեսական գիտելիքների բարձրացմանը, գործնական բիզնես հմտությունների անրապնդմանը եւ ներառում է ինչպես ինտերակտիվ դասախոսություններ, այնպես էլ գործնական վարժություններ: Քվեմո Զարբիլում, Սամցխե-Ջավախեթիում եւ Կախեթիում ապրող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ

կանանց համար վերապատրաստման դասընթացը ներառում է հետեւյալ թեմաները՝ «Բիզնեսի էությունը եւ դրա պլանավորումը», «Մշակել բիզնես գաղափարը», «Բիզնեսի եւ արտադրանքի զարգացման փուլեր», «Բիզնեսի անվան ընտրություն», «Շուկայի վերլուծություն», «Մշակել բիզնես մոդել», «Շահույթի մարժա եւ գրոյական կետի հաշվարկ», «Նախնական բյուջե եւ ֆինանսավորման աղբյուրներ»: Դասընթացի տեւողությունը 22 ժամ է: Ժամանակահատվածը՝ հու-

նիսի 27 - հուլիսի 15, Աշխատանքային լեզուն՝ վրացերեն: Դասընթացը կանցկացվի առցանց, որին կմասնակցի ընդհանուր առմամբ 16 վերապատրաստվող: Դասընթացին մասնակցությունն անվճար է: Մրցույթի մասնակիցները կընտրվեն երկու փուլով: Առաջին փուլ. դիմորդները պետք է ուղարկեն կարճ կենսագրություն (CV) եւ կից մասնակցությունը նպատակը եւ առկայության դեպքում բիզնես գաղափարի համառոտ ակնարկը: Երկրորդ փուլում ընտրված թեկնածուները կանցնեն հարցազրույց (առցանց) Ռեգյումեն եւ մոտիվացիոն մասնակց պետք է ուղարկել հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ press@smr.gov.ge: (Թեմայի դաշտում պետք է նշել դասընթացի անվանումը՝ «Ինչպես սկսել եւ զարգացնել բիզնեսը»): Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2022 թվականի հունիսի 20-ն է:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է ԱՆԱՍՆԱՊԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող «Դիմա» ֆինանսավորման ծրագիրը վերաբերում է կաթնամթերքի մշակմանը եւ ուղղված է գյուղատնտեսության զարգացմանը:

Նինոծմինդայի «SEREC» կենտրոնի համակարգող Աղասի Զալալյանի խոսքով, «SEREC-ի գրասենյակում պատրաստ ենք օգնել բոլոր ցանկացողներին, ովքեր ցանկություն ունեն մասնակցելու ֆինանսավորման ծրագրին: Առաջնահերթությունը տրվում է կանանց: Հայտերը կընդունվեն մինչեւ հունիսի ամսվա վերջը»:

- Արդեն սկսվել է երկրորդ փուլը, հանձնաժողովի անդամներն իրականացնում են ֆերմաների ստուգման աշխատանքները, ստուգում են, թե բնակիչների լրացրած հայտերն որքանով են համապատասխանում իրականությանը եւ ֆերմաների սահմանած չափանիշներին: Ֆինանսավորումը 100 տոկոս է, բայց ուն կընտրեն մենք չգիտենք, դա մեր իրավասությունների մեջ չի մտնում,- ավելացրեց Զալալյանը: Նշենք, որ «Դիմա» ծրագիրը կֆինանսավորի անա-

սնապահական ոլորտին անհրաժեշտ միայն 1 սարքավորումով, դա կարող է լինել կթող սարքավորում, կերի մանրացնող սարքավորում, մետաղյա տարրաներ կենդանիների կերի համար եւ այլն:

«ՓԱՐՎԱՆԱՆ»՝ ՊԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՄՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Անկախության տոնի առիթով անցկացվել է «Խաղաղություն աշխարհին» խորագրով միջազգային փառատոն, որին մասնակցել են հայտնի երգիչներ, համույթներ Լեհաստանից, Գերմանիայից, Ադրբեջանից, Իրանից, Հայաստանից: Վրաստանից մասնակցել է կույրերի մշակույթի, կրթության եւ սպորտի կենտրոնի «Կրծանիսի» տղաների համույթը (ղեկավար՝ Յուրի Միքաբերիձե) եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի «Փարվանա» պարային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Մզիկյան):

Փառատոնին «Փարվանան», Իրանի պարային համույթի հետ միասին արժանացել է լավագույն պարային համույթի մրցանակին: - Սակայն փառատոնը 3-4 փուլից է կազմված, եւ հնա-



րավոր է մյուս փուլերում եւս այլ պարզեւտարվողներ լինեն,- ասաց Լուսինե Մզիկյանը եւ հավելեց, որ «Փարվանան» մշտապես մասնակցում է տարբեր փառատոնների:

- Այս անգամ պարզեւտարվեցինք «Բերդ» պարի համար: Համեզային ծրագրի վերջում ժամանակակից երաժշտության հնչողության տակ պետք էր ֆլեշնոբ կազմակերպել, մեր անսամբլը նաեւ այստեղ իմպրովիզացիայի դիմեց եւ պարեք «Բերդ» պարը, որը ժյուրիին շատ դուր եկավ,- ասաց համույթի գեղարվեստական ղեկավարը: Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՂԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՅ՝ ԵԿՈՂ ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՀԱԶՈՐԴ ՂԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ ՎԱՅԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ՎՐԱՍՏԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի առանձնագրույցը, որին հաջորդեց պատվիրակությունների հանդիպումն ընդլայնված կազմով:

Հանդիպմանը քննարկվեցին վրաց-հայկական հարաբերություններին եւ զարգացման հեռանկարներին վերաբերող հարցեր:

Հանդիպման ավարտին երկու երկրների նախագահները համատեղ մամուլի ասուլիսում հանդես եկան հայտարարություններով:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱՔԻՇՎԻԼԻ. «ՈՒՐԱՆ ԵՆՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՅՅԸ ԿԱՏԱՐՎԵՐ ՎՐԱՍՏԱՆ»



- Այսօր մենք հյուրընկալեցինք Հայաստանի նախագահին: Ուրախ ենք, որ նրա ցանկությունն էր՝ նախագահական ընտրություններից հետո արտասահմանյան առաջին պաշտոնական այցը կատարվեր Վրաստան: Սա մեր սերտ եւ բարեկամական հարաբերությունների վկայու-

թյունն է, ինչը մենք արժանավայել գնահատում ենք: Այս տարի Վրաստանն ու Հայաստանը նշում են դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակը, եւ այդ երեսուն տարիները մեր երկրների համար բարդ ու դժվարին ժամանակահատված էր: Սակայն, մեր փոխհարաբերությունները մշտապես եղել են բարյացակամ, ինչը բարեկամության, փոխըմբռնման եւ փոխհամագործակցության պայմաններում կշարունակվի հաջորդ դարերում:

Մեր տարածաշրջանն ու մեր երկրները կանգնած են նոր մարտահրավերների եւ հնարավորությունների առջեւ: Ռուսաստանի ագրեսիան Ուկրաինայում բոլորի համար նոր մարտահրավեր է, քանի որ խախտվում են միջազգային բոլոր նորմերն ու սկզբունքները, ինչի վրա հիմնված է միջազգային կարգուկանոնն ու անվտանգության ճարտարապետությունը, դրանով իսկ հերթական անգամ խախտվում է մեր երկրների ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականության սկզբունքը:

Բոլորի համար անհանդուրժելի է, ինչ կատարվում է Ուկրաինայում: Մենք կանգնած ենք Ուկրաինայի կողքին եւ լրիվ համերաշխություն ենք հայտնում նրան:

Ռուսաստանի կողմից բռնազավթված Վրաստանի տարածքներում իրավիճակը ծանր է, նրանց կողմից ինքնիշխանության ոտնահարումը եւ մարդկանց իրավունքների կոպիտ խախտումները շարունակվում են, ինչն էլ ավելի է սրվում հուլիսի 17-ին ծրագրված հանրաքվեի տեսքով, նոր սպառնալիքով:

Մեր երկրամասի ապագան սերտորեն պայմանավորված է խաղաղ միջավայրով, եւ հուսով ենք, որ Հայաստանի ու Ադրբեյջանի միջեւ բանակցությունները հաջողությամբ կընթանան: Այդ բանակցությունների արդյունքներից է կախված տարածաշրջանում խաղաղության հաստատումը, իսկ խաղաղության հաստատումով պայմանավորված է տնտեսական զարգացումը եւ բոլոր այն նոր ծրագրերը, որոնք առնչվում են տարածաշրջանին եւ ձեւավորում նրա ապագայի մեծ հեռանկարները:

Մեր հանդիպմանը նշեցինք, որ Վրաստանում առկա են բոլոր պայմանները, որպեսզի հայազգի Վրաստանի քաղաքացիները պահպանեն մայրենի լեզուն ու մշակույթը եւ, միաժամանակ, կարողանան ակտիվ մասնակցություն ունենալ երկրի կյանքին: Այդ տեսանկյունից ջանք չենք խնայի: Մեր երկրում հայկական եւ արբեյջանական ծագման քաղաքացիները համագոյակցում են: Երկրում ստեղծված հանդուրժողական միջավայրը դրական օրինակ է նաեւ ողջ կովկասյան տարածաշրջանի, կովկասյան ավանդույթների շարունակության համար:

ՎԱՅԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ԿԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ Ե ՏԱԼԻՍ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՈՒՆԱԿՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»

- Նախ շնորհակալություն եմ հայտնում մեծարգո տիկին Ջուրաբիշվիլուն ջերմ ընդունելության եւ արդյունավետ քննարկումների համար:

Ուրախ եմ Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակում առաջին պաշտոնական այցը

իրականացնել հյուրընկալ հարեւան երկիր:

Տարին առանձնահատուկ է հայ-վրացական հարաբերությունների համար. լրանում է դիվանագիտական հարաբերությունների հաստատման հրեյանակա 30-ամյակը: Թեւե միջպետական հարաբերություններն ընդամենը 30 տարեկան են, բայց մեր երկրների միջեւ բարեկամությունն ունի հազարամյակների պատմություն: Հայաստանը մեծ կարեւորություն է տալիս հարեւան Վրաստանի հետ հարաբերությունների շարունակական զարգացմանն ու ամրապնդմանը, որի համար առկա են բոլոր նախադրյալները:

Հայ-վրացական հարաբերությունները դիմամիկ զարգացում են արձանագրել, եւ իզուր չէ, որ Հայաստանի կառավարության ծրագրում այդ հարաբերությունները որակվել են առանձնապես բարիդրացիական:



Այսօր Վրաստանի նախագահ տիկին Ջուրաբիշվիլին եւ ես բավական հագեցած քննարկումներ ենք իրականացրել, որոնք ներառում են երկկողմ համագործակցության ամենատարբեր ոլորտներ՝ տրանսպորտ, կապ, հաղորդակցություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հումանի-

տար հարցեր եւ այլն:

Անշուշտ, տիկին Ջուրաբիշվիլու հետ հանդիպման ընթացքում երկկողմ օրակարգից գատ անդրադարձել ենք նաեւ անվտանգային, քաղաքական եւ տարածաշրջանային նշանակության հարցերի: Ցանկանում եմ ընդգծել, որ նման հարցերում առկա փոխըմբռնումը պայմանավորված է հայ-վրացական անխախտ բարեկամության գիտակցումով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՋՔՈՒՄ «ԽԱՂԱՂ ԶԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՐ

Մայիսի 31-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առկա երկկողմ համագործակցության հարցերն ու բարիդրացիական հարաբերությունները: Քննարկվեցին նաեւ համաշխարհային եւ տարածաշրջանային անվտանգության հարցեր: Կողմերն անդրադարձան Իրակլի Դարիբաշվիլու առաջադրած «Հարավային Կովկասում հարեւանության խաղաղ նախաձեռնություն» ծրագրին, որը նախատեսում է երեք երկրների միջեւ երկխոսության ձեւաչափի հիմնումն ու փոխշահավետ ուղղություններով համագործակցություն: Նշվեց, որ Վրաստանը միշտ եղել է Հարավային Կովկասում խաղաղ համագործակցության եւ համագոյակցության կողմնակիցն ու պատրաստ է նպաստել տարածաշրջանային երկխոսության անցկացմանը: Հայաստանի նախագահը Իրակլի Դարիբաշվիլուն շնորհակալություն հայտնեց խաղաղության երկխոսության գործընթացում ներդրած ավանդի համար:

Հանդիպմանը խոսվեց նաեւ էներգետիկայի, տրանսպորտային հաղորդակցության եւ Սեւ ծովի անվտանգության ուղղություններով երկու երկրների համագործակցության զարգացման մասին: Քննարկվեց առեւտրի ոլորտում համագործակցությունը: Նշվեց, որ 2022 թվականի առաջին եռամսյակում երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը կազմեց 170,49 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը 12 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ընդգծվեց, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ապրանքաշրջանառության աճը մեծ հնարավորություններ ունի:

Վրաստանի կառավարության գրասենյակում կայացած հանդիպմանը հայկական կողմից ներկա էին Հայաստանի բարձր տեխնոլոգիաների, արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը, արտաքին գործերի փոխնախարար Պարույր Զովհաննիսյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սաղոյանը, Հայաստանի նախագահի խորհրդական Տաթևիկ Կարապետյանը:

Վրացական կողմից հանդիպմանը ներկա էին Վրաստանի փոխվարչապետ, Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար Ռեւազ Ջա-

վելիձեն, արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիան, Հայաստանում Վրաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Իրակլի Կվանճախաձեն:

ԸՆԴՉԾՎԵՑ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլու եւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի հանդիպումը:

Հանդիպման մեկնարկին Վրաստանի խորհրդարանի նախագահը ողջունեց Հայաստանի նախագահի այցը եւ նշեց, որ առանձնահատուկ է գնահատում Վահագն Խաչատուրյանի Հայաստանի նախագահի կարգավիճակում հենց Վրաստան կատարած առաջին պաշտոնական այցով գտնվելը:

- Մեր երկրների միջեւ եղած դարավոր բարեկամությունը ամրապնդվում է նման բարձր մակարդակի այցերով,- նշեց Շավլա Պապուաշվիլին:

- Հայաստանը բարձր է գնահատում եւ մեծապես կարեւորում է հայ-վրացական հարաբերությունները: Հայ եւ վրացի ժողովուրդների եղբայրական դարավոր հարաբերություններն այսօր էլ հիմնված են փոխադարձ հարգանքի եւ մեր երկու պետությունների միջեւ ձեւավորված բարեկամական համագործակցության վրա,- իր հերթին նշեց Վահագն Խաչատուրյանը:

Հանդիպմանն առանձնահատուկ կարեւորվեց միջխորհրդարանական համագործակցությունը, բարեկամության խմբերի, երկու երկրների խորհրդարաններում գործող հանձնաժողովների միջեւ պարբերական հանդիպումների կազմակերպումը:

Հանդիպմանը վրացական կողմից ներկա էին Վրաստանի խորհրդարանի առաջին փոխնախագահ, վրաց-հայկական բարեկամական խմբի համանախագահ Գիորգի Վոլսկին, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Սամվել Մանուկյանն ու Սմբատ Կյուրեղյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԵՏ



Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում այցելեց Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոն, որտեղ հանդիպեց մի խումբ վիրահայ հասարակական եւ մշակութային գործիչների հետ:

Հանդիպմանն անդրադարձան Հայաստանի ներքաղաքական իրավիճակին, տարածաշրջանային անվտանգությանը:

Վահագն Խաչատուրյանը պատասխանեց հանդիպման մասնակիցների հարցերին:

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻՆ

Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն այցելեց Թբիլիսիի Հայ գործիչների եւ հասարակական գործիչների խոջիվանքի պանթեոն, ծաղկեպսակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի մոտ:

Նախագահը շրջեց պանթեոնի տարածքում եւ ծաղիկներ դրեց հայ անվանի գործիչների շիրմաքարերին: Հիշելով պանթեոնի պատմությունը հակիրճ ներկայացրեց «Միասին» հասարակական կազմակերպության նախագահ Լեւոն Չիդիյանը:

Պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն այցելեց Թբիլիսիի «Հերոսների հրապարակ» եւ ծաղկեպսակ դրեց հավերժական կրակի մոտ:

«Արմենպրես» - «Վրաստան»